# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

գ. Լոռի Բերդ « 03 » հունիսի 2026թ.

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 6

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026թ. հունիսի 03-ին, ժամը՝ 11:00-ին հրավիրված արտահերթ նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի ֆեյսբուքյան էջով, քանի որ համայնքապետարանի յութուբյան ալիքի հետ առաջացել է տեխնիկական խնդիր:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասնչորս անդամները, բացակա էր՝ Վահրամ Պապիկյանը;

<u>Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:</u>

<u>Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:</u>

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

<u>Լսեցին՝</u>

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<u>Զեկ./Արայիկ Ներսիսյան/</u>

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

<u>Ավագանին որոշեց՝</u> հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 03-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի արտահերթ նիստի՝ հունիսի 03-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ և Ուռուտ բնակավայրերում համայնքի կողմից մատուցվող խմելու ջրամատակարարման ծառայության սակագինը սահմանելու մասին:

4) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 08-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

<u>14 կողմ</u>, <u>0 դեմ</u>, <u>0 ձեռնպահ:</u>

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

<u>Լսեցին՝</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<u>Զեկ./Մարգարիտա Հովսեփյան/</u>

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով՝

<u>Ավագանին որոշեց՝</u> կատարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեում հետևյալ փոփոխությունները համաձայն՝ հավելվածի:

<u>14 կողմ</u>, <u>0 դեմ</u>, <u>0 ձեռնպահ:</u>

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ն

Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԵՎ ՈՒՌՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Անի Մարտիրոսյան/

Հիմք ընդունելով՝ «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում 2026 թվականի տեղական տեղական վճարների տեսակները, դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 24-ի թիվ 75-Ն որոշման հավելված 2-ի 13-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով Ագարակ և Ուռուտ բնակավայրերում խմելու ջրամատակարարման ծառայության կազմակերպման և ծախսերի փոխհատուցման անհրաժեշտությունը՝

Ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ և Ուռուտ բնակավայրերում համայնքի կողմից մատուցվող խմելու ջրամատակարարման ծառայությունից օգտվող բաժանորդների համար սահմանել ջրի սակագին՝ 1 (մեկ) խորանարդ մետրի (մ$^3$) դիմաց 180 (մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

Լսեցին՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 08-Ի ԹԻՎ 28-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Ավագանին որոշեց՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ

համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 08-ի թիվ 28-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2026 թվականի հունիսի 19-ը, ժամը՝ 12:00-ն »:

14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

*Նիստի փակում*.

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի

Խալաթյան Ավետիք Հարությունի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Պապյան Հարություն Միշիկի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Չատինյան Վանո Վալերի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Վերմիշյան Կարլեն Ջիվանի

Գրիգորյան Աննա Հրայրի

Սերոբյան Անի Սամվելի

Գևորգյան Միշիկ Մարտիկի

Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան ____________

*Նիստը արձանագրեց*՝ Անի Մարտիրոսյանը ____________

Կ.տ.